Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

Թամարին Հայաստանեաց
բարեգործն էր

361
Թ-31

1 MAR 2010

# ԸՆԴ ՀՈՎԱՆԵԱՒ
# ԱՐԵԳԱԿՆԱՓԱՅԼ ՇԱՀՆՇԱՀԻ

## ՏԵՂԵԿԱԳԻՐ
և
## ՀԱՇՒԵՑՈՅՑ

ԹԱՒՐԻԶԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1901-1902

Թաւրիզ

Տպարան Թաւրիզու Հայոց Արամեան Դպրանոցի

18 APR 2013
361
P-31

# ԸՆԴ ՀՈՎԱՆԵԱՒ ԱՐԵԳԱԿՆԱՓԱՅԼ ՇԱՀՆՇԱՀԻ

370
Չ350-Յե

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

և

# ՀԱՇԻՒՑՈՅՑ

## ԹԱՒՐԻԶԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

## 1901-1902

Թաւր[illegible]

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Տպարան Թաւրիզու Հայոց Արամեան Դպրանոցի

92.761

# ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Հոգեհարազատ զաւակաց Մայր Աթոռոյս Ազնուափայլ և Պարկեշտասուն անդամոց Հայուհեաց Բարեգործական միացեալ Ընկերութեան Պաւրիժոյ նուիրեմք ողջոյն և Հայրապետական օրհնութիւն:

Չէին դանդաղել ի մէնջ գործք առաքինականք և վաստակք ազգասիրականք, երկուց Հայուհեաց Ընկերութեանցդ Պաւրիժոյ և Ատրպատականի ուրոյն ուրոյն ի քանի մի ամաց հետէ, և գիտեմք եթէ որչափ վաստակեցայք ի դառն և ի դժուար ժամանակի՝ ազգասպան գաղթականութեան Վասպուրականի և Արեւելեան սահմանացն նորա, յորժամ ի դառն և ի դժնդակ սառնամանեաց ձմերայնի գունդագունդ դիմէին ի նահանգն Ատրպատական, ապաւինելով ի բազմագութ հովանին Արեգակնափայլ Շահն Շահի՝ զանձինս և թշուառգոյութիւնս ի մարդասէր շնորհս ազգայնոց վիճակիդ և խնամոց Բարեգործական Ընկերութեանցդ ապաստան առնելով:

Հաւաստի լինէաք և ամի ամի ի տեղեկագրոց Ընկերութեանցդ՝ եթէ քանիցն և թշուառ գերդաստանք, որբք, և այրիք բնիկք ի Պարսկահայոց կերակրէն, խնամէն; ուսում

և արհեստ ուսանէին և օժանդակութեամբ ձերով գործ և
պարապմունս գտանէին և պատուով և քրտամբ զապրուստ
իւրեանց հոգային: Օրհնեա՜լ էք դուք, ո՛ բարեպաշտուհի
Տիկնայք, և օրհնեա՜լ ջանք ձեր և վաստակ, շնորհ շնորհողի
ի ձեզ հանգիցէ և օրհնութիւն Ամենակալին ի ձէնջ ան-
սպառ եղիցի:

Որ դաստիարակեալքդ էիք և զարգացեալ ուսմամբ և
կրթութեամբ, գիտէիք ապաքէն՝ եթէ քանի՜ն քաղցր էր
ձեզ երկուց համազօր, համագործ, համակամ և համընթաց
Ընկերութեանցդ միանալ իմի և ձեռն ի ձեռն տուեալ յառաջ
վարել զգործս կրթականս և զբարեգործականս ի մի սիրտ և
ի մի հոգի ձուլեալ ի սէր կրթութեան փոքրկանց մերազնէից,
և ի սէր յառաջադիմութեան իգական սեռի վիճակիդ և յամո-
քումն վշտաց անապաւէն անակաց· և ահա այսօր ուրախու-
թեամբ սրտի և մխիթարութեամբ հոգւոյ ընկալաք զաւետա-
բեր գրութիւն ձեր, ուղղեալ ի 20 Օգոստոսի տարւոյս
ստորագրութեամբ Ազնուափայլ Տիկնանց՝ Հռիփսիմէի
Գրինֆիլդ և Մարիամու Նազարբէգեան, հասուցեալն ընդ
ձեռն Ազնուափայլ Տիկին Հեղինէի Ժորժ. և ահաւասիկ
Հայրապետական Կոնդակաւս այսու օրհնելով հանդերձ զայդ
միաբանութիւն նախկին երկուց՝ իսկ այժմ միացեալ, Ըն-
կերութեանց հաստատեմք, մաղթելով ի Հօրէ Ամենակալէ
տարածանել զհովանին իւր ի վերայ միացեալ Ընկերու-
թեանդ առ ի կալ մնալ ձեզ անփորձ և անսասան ընդ յա-
մայր ամս ի յաջողութեան և յազգօգուտն գործնէութեան:
Մարդասէր Փրկիչն ու հաւաստեացոյց զհաւատացեալսն
անվարձ չթողուլ զմատուցողն բաժակ մի ցուրտ ջրոյ յա-
նուն աշակերտի, ինքնին անսպառ ողորմութեամբ իւրով
վարձահատոյց ձեզ աշխատողացդ եղիցի, եթէ յաշխարհիս
աստ ամենայն առատութեամբ յաջողութեամբ կատարեալն
երջանկութեամբ և թէ ի հանդերձեալումն ընդ իմաստուն
Կուսանաց անճառ փառացն և յանզրաւ ուրախութեանց

մասնակից առնելով։

Շնորհ, սէր, ողորմութիւն և երկնային խաղաղութիւն ի վերայ ձեզ և ընդ ձեզ զամենիսեանդ եղիցի ամէն։

ի 13-ն Սեպտեմբերի 1901 ամի
և ըստ Տոմարիս ՌՅՆԾԸ·
է Հայրապետութեան Մերում Բ. ամի
յ Արարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ
թ. 1123

**Մ. Կ. ԽՐԻՄԵԱՆ**

## Տեղեկագիր 1901-1902 տարեշրջանի

Յայտնի է որ Թաւրիզում վաղուց գոյութիւն ունէին Հայուհեաց երկու բարեգործական ընկերութիւններ, որոնցից մէկը կոչւում էր „Սոփրատականի“ 1895 թւից իսկ միւսը „Թաւրիզի“ 1890 թւից: Այս երկու ընկերութիւնների թէ նպատակները և թէ գործունէութիւնների եղանակն՝ աննշան զանազանութեամբ՝ գրեթէ նոյնն էին: Այս պատճառով շատ անգամ խնդիր է ծագում թէ՞ միևնոյն քաղաքում, միևնոյն նպատակներով ինչ՞ միտք ունի երկու զատ ընկերութիւնների գոյութիւնը: Բացի սրանից, ընդհանուր հասարակական կարծիքի հետ միասին՝ ընկերութիւններին մօտիկ ու բարեկամ մարդիք էլ յաճախ խորհուրդ էին տալիս միանալ և միացած ուժով ձգտել դէպի նպատակը: Իրանց ընկերութիւնների մէջ էլ յաճախ յարուցել էր միութեան խնդիրը բայց ինչ ինչ արտաքին արգելքների պատճառով յետաձգել էր: Անցեալ 1901 թւին նոյն խնդիրը կրկին յարուցւեց երկու ընկերութիւնների մէջ աւելի հասունացած կերպով և երկու կողմից էլ սկզբունքով ընդունելով միութեան անհրաժեշտութիւնը, վարչութիւնները իրանց ընդհանուր ժողովներից լիազօրութիւն ստացան խնդիրը գործնական հողի վրայ դնելու: Այս նպատակով երկու վարչութիւնները խառն՝ մի շարք նիստեր ունեցան, կարգադրեցին միութեան պայմանները, նշանակեցին միացեալ ընկերութեան անունը և մշակեցին նոր կանոնագրութիւնը, որը կրկին քննելով ընդհ. ժողովներում և վաւերացնելով երկու ընկերութիւնների ստորագրութեամբ՝ ուղարկեց Ս. Էջմիածին և հաստատեց Ամենայն Հայոց Վեհ. Կաթուղիկոսից:

Միութիւնը կատարուած հրատարակեց 1901 թիւ Սեպտ. 10-ին կազմուած ընդհ. ժողովի մէջ, ուր երկու ընկերութիւնների անդամուհիների կողմից ընդունեց և ստորագրեց կանոնագրութիւնը և ընտրեց միացեալ ընկերութեան համար նոր վարչութիւն:

Ընկերութիւնն անուանեցաւ „Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական Միացեալ Ընկերութիւն“:

Միացման թւականին „Սոփրատականի Հայուհեաց ընկերութիւնն ունէր կանխիկ դրամագլուխ 25,041 ղրան 75 կոպէկ. իսկ

Թաւրիզի Հայուհեաց ընկերութիւնն ունէր 47,265 ղրան. 35 կոպէկ (*), որոնցով Միացեալ Ընկերութեան դրամագլուխը եղաւ 72,307 ղրան 10 կոպէկ. բացի երկու ընկերութիւնների հաստատութիւններում ունեցած զանազան կարասիքները. դասական պիտոյքները և ձեռագործի վերաբերեալ նիւթեր։

"Շրջապատականի" ընկ-ըն ունէր հետևեալ հաստատութիւնները.- մի մանկական պարտեզ և մի կարուձևի արհեստանոց Թաւրիզում (ղալա) և երեք արական սեռի ուսումնարաններ Ուրմիում, Գեղդաբաղում և Դերեկլքում։

"Թաւրիզի Հայուհեաց" Ընկ-ն ունէր.- մի մանկական պարտեզ և մի կարուձևի արհեստանոց Թաւրիզում (Լիլաւա) և հինգ ուսումնարաններ Գիզլթէքէում և Խարաբուում երկսեռ, Շղալանում և Խըքքի-Շղաջում աղջկոց և Մահլայում օրիորդաց։

Այսպիսով Միացեալ ընկ-ն ունեցաւ 13 հաստատութիւններ որոնց գոյութիւնն անհրաժեշտ համարելով՝ որոշեց պահել անփոփոխ։

---

Երկու ընկերութիւնների միութիւնը, որ գրեթէ ամէն մի հասարակական խնդիրներով հետաքրքրուող մարդու ցանկութիւնն էր՝ ոգևորելով Միացեալ Ընկերութեան Վարչութեանը, առիթ տուեց նրան յուսալու բարեգործ անձանց նիւթական աջակցութեան. և հէնց այդ հիման վրայ էլ կազմած նախահաշուի համեմատ՝ վարչութիւնը կարևոր համարեց Ուրմի Ուշնվա և Բարանդուզի Թումաթար գիւղերում տղայոց ուսումնարաններ բաց անել և լրացնել միւս հաստատութիւնների այն պակաս կողմերը, որոնք սովորաբար

(*) Ծանօթ.

Թաւրիզի Հայուհեաց Ընկ-ը իւր կանոնադրութեան 38 և 40 յօդուածների հիման վրայ՝ առանձին պարտաւորութիւն ունէր նպաստելու Լիլաւայի Թամարեան դպրոցին (օրիորդաց) և որովհետև միութիւնը նախքան միանալը իւր դրամագլխից 30,000 ղրան նուիրել էր յիշեալ դպրոցին։



առաջ են գալիս տնտեսական խնայողութիւնից։

Միացեալ Ընկերութեան Վարչութիւնը ոչ մի ճիգ ու ջանք չը խնայեց որ ընկ-եան այն 1901-1902 տարեշրջանի գործունէութիւնը, որքան կարելի է, աւելի և աւելի օրինակելի լինի գաւառներում, ուր աղքատութիւնը և նրանից առաջ եկած չարիքները քայքայում են հայ հասարակութեան կազմը և վտանգի ենթարկում ազգի՝ նրա եկեղեցու և լեզուի գոյութիւնը։ Միւս կողմից Ընկ-ը լինելով մի կրթական և բարեգործական հիմնարկութիւն և բնականաբար իւր վրայ կրելով պարտականութիւնների մի ահագին ծանրութիւն, ստիպուած եղաւ աւելի մեծ չափով խնայողութիւններ անել, քան որ թոյլ էին տալիս իւր նիւթական միջոցները։ Այս բոլորի վերաբերմամբ Վարչութիւնը յոյս ունէր հայ բարեգործ, գիտակցական և Ընկ-եան համակիր անձանց նիւթական աջակցութեան. սակայն դժբախտաբար տնտեսական տագնապների պատճառով (ընդհանրապէս Կովկասում և Պարսկաստանում և մասնաւորապէս Թաւրիզում) Վարչութեան յոյսերը չ'իրականացան և նա ստիպուած եղաւ իւր ձեռնարկած գործերը կատարելու և գլուխ բերելու համար ծանրանալ մեծ մասամբ ընկերութեան միջոցների և դրամագլխի վրայ։

Պէտք է մօտիկից ծանօթ լինել գիւղութեան, պէտք է ուսումնասիրած լինել մեր նահանգի հայ ազգաբնակութեան կեանքը, մեծամասնութեան տնտեսական և բարոյական անմխիթարելի դրութիւնը, պէտք է կարդալ մեր գաւառական ուսուցիչների տուած տեղեկագրերը, որպէսզի հնարաւոր լինի նախ՝ ըմբռնելու կարիքի այն մեծ չափը, որ թագաւորում է Շրջապատականի բոլոր գաւառներում և երկրորդ՝ զգալու գործի, օգնութեան և զոհողութիւնների այն մեծ պահանջը, որի համար պատասխանատու պիտի համարի իրան իւրաքանչիւր պարտաճանաչ հայ։ Դժբախտաբար շատ քչերին է յայտնի Շրջապատականցի հայերի վիճակը, քչերին է յայտնի այդ վիճակի համապատասխան պահանջների անհրաժեշտութիւնը, անշուշտ է պարտաճանաչ տնտեսական պահանջների թէ՛ և Հայուհեաց. Ընկ. Միացեալ և հոգատար անհատների թիւը, որ պարտականութիւն է սահմանել Ընկ-ը միակ հաստատութիւնն է, որ երկրի դժբախտ դրութիւնը, միջոց բան կարելոյն բարեփոխել

ընտրելով իրան մանուկ սերնդի կրթութիւնը-այն միակ ուղիղ ճանապարհը, որով կարելի է հասնել բարեկեցիկ ապագայի: Բայց ինչ կարող է անել մի ընկերութիւն գործի այսպիսի մեծ պահանջների առաջ, հիմնւելով միմիայն իւր ուժերի վրայ: Հարկաւոր է արտաքին օգնութիւն, հարկաւոր է շատերի աջակցութիւնը: Ընկերութեան նիւթական միջոցները իւր նպատակի ընդարձակութեան առաջ այնքան սուղ են, այնքան անբաւարար, որ բացարձակապէս անկարելի է պահանջին համապատասխան հատուցում անել, չարիքին համապատասխան դարման տանել: Եթէ չը լինէին այն մի քանի բարեգործ անհատները-որոնց անունները շնորհակալութեամբ յիշատակած ենք այն տեղեկագրի մէջ-որոնք իրանց նիւթական զոհաբերութեամբ թեթեւացրել են Ընկ-եան ստանձնած պարտականութեան ծանրութիւնը, այն ժամանակ նա՝ Ընկերութիւնը պիտի ճնշւէր, պիտի տկարանար և յուսահատւէր այդ ծանրութեան տակ:

Այս օր Ատրպատականի 35-40 հազար Հայ գաւառացի ժողովուրդը Միացեալ ընկերութեան վարչութեան բերանով կոչ է անում այն բոլոր հայերին, որոնք միջոցներ ունեն և պարտականութիւն են զգում իրանց միջոցներով օգտակար լինել իրանց ազգին, որ յիշեն իրանց այդ պարտականութիւնը, խղճան այս տասնեակ հազարաւոր ժողովրդի վիճակին և իրանց կարողութեան չափով օգնութեան ձեռք կարկառեն այն ընկերութեան, որը զբաղւած է հայ գաւառաների մանուկ սերնդի կրթութեան գործով:

Հանգամանքները յաջող են, բոլէն նպաստաւոր: Շնորհիւ մեր պետութեան Ինքնակալ Արեգակնափայլ Շ ա հ ը ն շ ա հ Մ ի ւ զ է ֆ է ր է դ դ ի ն ի հայասէր և հայրախնամ կառավարութեան, շնորհիւ Նորին Կայսերական Մեծութեան դէպի ժողովրդական կրթութիւնն ունեցած [illegible] ցանկութեան, որով հովանաւորում է և պարսկահայ ժողովրդի կրթութեան գործը, ամեն դիւրութիւն ունինք խաղաղ և անարգել կերպով զարգանալ և յառաջադիմելու ուսման և կրթութեան՝ ապա ուրեմն բարեկեցութեան և բարգաւաճման մէջ:

Պէտք է օգտւել այս հանգամանքից, պէտք է օգտւել մեծ չափով: Այս է պահանջում թէ՛ Պետութեան և թէ՛ Հայութեան շահը:

Միացեալ Ընկ-եան Վարչութիւնը սիրում է յուսալ, որ իւր



կոչը չը պիտի մնայ ձայն բարբառոյ յանապատի, այլ նա արձագանք պիտի գտնի Հայութեան խաւերում, արձագանք պիտի գտնի ամեն մի ազնիւ հայ սրտի մէջ և այսպիսով Ընկ-ը բաղդ պիտի ունենայ նիւթական և բարոյական օգնութիւն և օժանդակութիւն ստանալ շատ շատերից: Վարչութիւնս չափազանց շնորհակալ պիտի լինի իւր աջակիցներից իսկ նոր սերունդն անհուն երախտագիտութիւն պիտի զգայ դէպի իւր բարերարները:

---

## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՍՏԱՑԱԾ ՆՈՒԷՐՆԵՐԸ.

Վարչութիւնս 1901-1902 տարեշրջանում շնորհակալութեամբ ստացել է հետևեալ նպաստները:

Պ. Տիգրան Աֆրիկեանից Բարաուի և Գիւլթէքէի ուսումնարանների համար 5,546 ղրան 55 կոպ:

Պ. Ալեքսանդր Մէք-Ազարեանից Ուրմիի ուսումնարանի համար 1694 ղրան 85 կոպ. և երկու սնդուկ տոնածառի իրեղէններ:

Պ. Ստեփան Տէր-Օհանեանից Գէրէլէքի ուսումնարանի համար 1,200 ղրան:

Տէր Գաբրիէլին քահ. Բաղդասարեանի ձեռամբ Եկատերինոդարում հանգանակած 200 ռուբլի:

Արժ. Բագրատ վարդապետի հանգ. դրամը (Բաքւում) 40 ռուբլի:

Բժիշկ Շահնազարեանից 25 ռուբլի:

Տիկին Անիչկա Տէր-Մկրտչեանից 25 ռուբլի.

Տիկին Աննա Պօլեանից 20 ռուբլի.

Տիկին Վարվառէ Տարասովից 5 ռուբլի.

Տիկին Իշխանուհի Թումայեանից 50 ռուբլի.

Տիկին Փեփրոնէ Յովհանեանից մանկապարտէզի աղքատ երեխաների հագուստի համար 30 ղրան.

Պ. Գրիգոր Գրիգորեանից 12 ղրան.

Ասադ խան Աֆթանդիլեանից 12 զոյգ գուլպա աղքատներին բաժանելու համար.

Կոլորադօ Սփրինգսից ոմն նուիրել է մի օրինակ „Բազմավէպ" և մի օրինակ „Արբունի":

Գ. Տիգրան Երզնկեանից 2 օրինակ «Պատմութիւն Նոր Ջուղայի» (երկ երկու համար):
Պ. Յովհաննէս Պալեանից 2 համար «Թատրոն»:
Տէր Ս. Երեմեանից մի մի օրինակ «Գեղունի»:

### ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՏՈՒԱԾ ՆՊԱՍՏՆԵՐԸ.

Ընկերութիւնը 1901-1902 տարեշրջանում տուել է հետեւեալ նպաստները.

Երեք գաղթական խեղճերի 60 ղրան.

Արամեան և Ս. Աննայեան դպրոցների չքաւոր աշակերտներին և աշակերտուհիներին հագուստ 540 ղրան 89 կոպ.

Թամարեան դպրոցի չքաւոր աշակերտուհիներին հագուստ 85 ղրան 69 կոպ.

Արամեան և Ս. Աննայեան դպրոցների մանկական գրադարանին 70 ղրան.

Շամախու երկրաշարժից վնասուածներին, Թաւրիզի Ռուսական հիւպատոս պ. Պախիտանովի միջոցով, 100 ռուբլի. (575 ղրան)

Ամերիկայի Մարտինիկա կղզու երկրաշարժից վնասուածներին Ֆրանսիական հիւպատոսի միջոցով 100 ղրան.

Ընկերութեան ունեցած և անցեալ տարիներում նուէր ստացած գրքերից ընծայուել է Մարաղայի գրադարանին 18 հատոր, Ուրմիի «Ջանշեան» գրադարանին 18. Ղալայի մանկական գրադարանին 16, «Արամեան» գրադարանին 15, Լիլաւայի մանկական գրադարանին 16 «Աբովեան» գրադարանին 17. և Ընկերութեան ուսումնարաններից իւրաքանչիւրին 12 հատոր:

Ընկերութիւնն իւր հաստատութիւնների համար բաժանորդ է գրուել և նուէր է ստացել հետեւեալ հրատարակութիւնները. «Նոր-դար», «Մշակ», «Բանասէր», «Գեղունի», «Բազմավէպ», «Ար-տէմիս», «L'Arméinie» և «Փիւնիկ»:



Ընկերութիւնը 1902-ի տարեմուտի երեկոյին Ղալա և Լիլա-ւա թաղերում տուել է տօնածառ և երեկոյթ, ուր խաղալիքներ և քաղցրեղէններ է բաժանել երեխաներին. վաճառահանութեան են դրել կարուձևի արհեստանոցների ձեռագործները:

Վարչութիւնս խորին շնորհակալութիւն է յայտնում Արամեան և Ս. Աննայեան դպրոցների ուսուցչական խումբին, որը սիրով յանձն առաւ երկու թաղերի երեկոյթների կազմակերպութիւնը նոյն դպրոցների աշակերտների և աշակերտուհիների մասնակցութեամբ:

Այս տարեշրջանում ընկերութիւնն ունէր 127 տարեկան և 39 մշտական անդամուհիներ նաև 11 պատուաւոր անդամուհիներ և անդամներ. գումարը 177:

Այս տարի ընկերութեան գործերի վերաբերմամբ կայացել են 28 վարչական և 4 ընդհանուր ժողովներ:

### ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Ուրմի քաղաքի ուսումնարանը.— այս ուսումնարանը բացուել է անցեալ 1900-1901 ուսում. տարեշրջանում, «Ատրպատականի» ընկ-եան ձեռնարկութեամբ և ունեցել է 30 աշակերտ և 3 աշակերտուհի: Այս տարի ուսանողների թիւը հասել է 50-ի, որոնցից 13-ը օրիորդներ: Ուսումնարանն ունեցել է 4 նախապատրաստական բաժանմունքներ և մի հիմնական դասարան: Կանոնաւոր պարապմունքը սկսուել է Սեպտ. 15-ից: Աշակերտների դպրոցական պիտոյքները և ուսումնարանին վերաբերեալ ծախքերը հոգացուել են ընկ-եան կողմից: Վարչութիւնս այս տարի այս ուսումնարանի համար ուղարկել է 84 հատոր զանազան դասագրքեր և մի գլօբուս: Ուսուցիչը ընկ-եան ուսուցիչների օգնութեամբ և աշակերտների մասնակցութեամբ կազմակերպել է երկու ներկայացում, տօնածառ-երեկոյթ տարեմուտի երեկոյին, մի հանդէս Վարդանանց տօնին և մի հանդէս ուսումնական տարեվերջին: Ներկայացումներից գոյացած թեթեւ արդիւնքը ծախսուել է դպրոցական կարիքների համար:

Այս ուսումնարանի հիմնարկութեան պատճառն ու բարերարը եղել է պ. Ալէքսանդր Մելիք-Ազարեանը, իւրաքանչիւր տարի 300

բուքլի նպաստ է ուղարկում:

Եթէ նկատի ունենանք որ այս ուսումնարանը 5 բաժանմունքներ ունի 50 աշակերտներով. նոյնպէս եթէ նկատի ունենանք, որ Ուրմի թմբած և հայութիւնից սառած հայ ժողովրդին ցնցելու, շարժելու և ոգևորելու համար որքան մեծ նշանակութիւն ունի դպրոցի կազմակերպած հանդէսներն ու երեկոյթները, նոյնպէս եթէ գանց չառնենք և այն հանգամանքը, որ Ուրմին իւր գաւառի կենդրոնն է, այն ժամանակ կը գտնենք որ մի ուսուցչի աշխատութիւնները խիստ ծանր կը լինին և յաճախ դէպս ոչ բաւարար: Անհրաժեշտաբար այս ուսումնարանը պէտք է ունենայ գոնէ երկու ուսուցիչ: Այս հանգամանքի վրայ հրաւիրում ենք, Ուրմիի հայ հասարակութեան և առհասարակ բարեգործ անձանց ուշադրութիւնը:

Գէորգաբադի ուսումնարանն Ուրմի գաւառում.—գիւղն զուտ հայաբնակ է և հայախօս: Ուսումնարանը չորս տարի է գոյութիւն ունի (նախկին տարիները „Արարատեանի“ ընկ-եան հաշւով): Այս տարեշրջանում ունեցել է 40 աշակերտներ, 10 աշակերտուհիներ և 10 էլ մանկապարտէզի սաներ, 4 բաժանմունքներով մի հիմնական դասարանով: Կանոնաւոր պարապմունքը սկսել է նոյեմբեր 12-ից: Տարւայ ընթացքում ուսուցիչը և աշակերտները կազմակերպել են 4 երեկոյթներ և մի հանդէս Վարդանանց տօնի առթիւ: Ուսումնարանը պահւում է միմիայն ընկերութեանս հաշւով:

Սահմա գիւղի ուսումնարանը Ուրմիի գաւառում.—գիւղը 150 տուն հայ բնակիչներ ունի: Տղայոց ուսումնարանը սկսել է ներկայ տարեշրջանից և ունեցել է 38 աշակերտներ 4 բաժանմունքներով: Կանոնաւոր պարապմունքը սկսել է Դեկտ. 17-ից (գործի սկիզբը լինելու պատճառով): Աշակերտների մի մասը առաջ եղել են զանազան միսիոնարութիւնների պատկանող ուսումնարաններում: Վարչութեան դիմումների և ուսուցչի աշխատութեան շնորհիւ ժողովուրդը ձեռնարկել է ուսումնարանի հիմնարկութեան, այնպէս որ սպասում ենք նոր տարեշրջանից նոր և յարմար շէնք ունենալ ուսումնարանի համար: Տեղի են ունեցել հանդէսներ:

Ընկերութիւնս այս գիւղում պահում է և մի օրիորդաց ուսումնարան, որը հիմնւել է 1900-1901-ից, նախկին „Թաւրիզի“



ընկ-եան հաշւով: Այս տարի այն ուսումնարանն ունեցել է 39 աշակերտուհիներ (7-ամսի) 4 բաժանմունքներով: Այս երկու ուսումնարաններն էլ պահւում են միմիայն ընկ-եանս հաշւով:

Իքի-Աղաջի ուսումնարանն Ուրմիի գաւառում.—Այս դպրոցը հիմնւել է 1899-1900 տարեշրջանից „Թաւրիզի“ ընկ-եան հաշւով: Այս տարի ունեցել է 23 աշակերտներ 3 բաժանմունքներով: Գիւղային զբաղմունքների պատճառով աշակերտները կանոնաւոր չեն յաճախում ուսումնարան և յառաջադիմութիւնը կրչում է: Հանդէս է տրւել Վարդանանց տօնի առթիւ: Բոլոր ծախքերը հոգացւել են ընկ-եանս կողմից:

Գիւղէ-Թէփէի ուսումնարանը Բարանդուզում.—գիւղը Թիւրքախօս և ասորէխօս է: Դպրոցը հիմնւել է 1898-1899 տարեշրջանից երկսեռ է: Այս տարի ունեցել է 23 աշակերտ և 15 աշակերտուհի. առաջինները 3 բաժանմունքով և մի հիմնական դասարանով իսկ երկրորդները միայն 3 բաժանմունքով: Գ. և Դ. տարւայ ուսանողները արդէն ազատ խօսում են հայերէն. գրական լեզւով: Նորին Կայսերական Մեծութեան Թագաժառանգ եղբայրը Իւր ճանապարհորդութեան ժամանակ այս գիւղից անցնելիս այս գիւղի և Գիւղէթէփէի աշակերտները իրանց ուսուցիչների առաջնորդութեամբ դիմաւորել են և մատուցել աշակերտների կողմից պատրաստւած 2 կտոր ընծայ: Ուսումնասէր և հայասէր Իշխանը բարեհաճել է ընդունել ընծան և խրախուսել ու քաջալերել նոցա ջանքերը կրթութեան ասպարիզում:

Սոյն երկսեռ ուսումնարանի բոլոր ծախքերը 1899-1900-ից սկսած իւր վրայ է առել և հոգում է ընկ-եանս պատւաւոր անդամ Մեծ. պ. Տիգրան Աֆրիկեանը:

Բարաուլի ուսումնարանը Բարանդուզում.—գիւղը զուտ Թիւրքախօս է: Ուսումնարանը երկսեռ է և հիմնւել է 1898-1899 տարեշրջանից: Այս տարի ունեցել է 34 աշակերտներ 4 բաժանմունքով և 23 աշակերտուհիներ 3 բաժանմունքով: Կանոնաւոր պարապմունքները սկսել են Հոկ. 8-ից:

Այս ուսումնարանի բոլոր ծախքերը 1901-1902-ից սկսած իւր վրայ է առել նոյնպէս Մեծ. պ. Տիգրան Աֆրիկեանը:

Թուլմաթարի ուսումնարանը Բարանդուզում.—գիւղը զուտ

թրքախօս է: Առաջին տարին է որ այս գիւղն ուսումնարան է ունենում, այս պատճառով այս տարի միայն 14 աշակերտ է ունի Ա. բաժանմունքի: Ծախսերն հոգացել են ընկերութեանս կողմից:

Գէբէլէքի ուսումնարանը Սոխուլ-Բուլաղում.— Այս ուսումնարանը հիմնել է 1900-1901 տարեշրջանից: Այս տարի ունեցել է 22 աշակերտ 3 բաժանմունքներով: Կանոնաւոր պարապմունքը սկսել է Հոկ. 1-ից: Դպրոցական ծախքերը հոգացել են ընկ-եան կողմից: Բարերարն է Արժ. ս. Ստեփան Տէր-Օհանեանը, որը իւրաքանչիւր տարի նուիրում է 1,200 դրամ նպաստ:

Եղագանի ուսումնարանը Գարադաղում.— Այս ուսումնարանը անցել է ընկ-եան ձեռքը 1899-1900-ի տարեշրջանում: Այս տարի ունեցել է 28 աշակերտ 3 բաժանմունքներով: Բոլոր ծախքերը հոգացել են ընկերութեան կողմից: Հաւաքել է չնչին թոշակագումար (130 դրամ):

Վերոյիշեալ 10 ուսումնարաններում սովորել են 368 հոգի, 269 տղայ և 99 աղջիկ. ուսուցիչ-ուսուցչուհիների թիւն 12: Ուսումնարաններից 4-ը պահւում է բարերարների և 6-ը ընկերութեան հաշւով: Ուսումնարանների համար մանրամասն և մշակւած ծրագիր է ուղարկւել վարչութեանս կողմից: Աւանդւել է Հայոց լեզու, Հայոց պատմութիւն, Կրօն, Իրագիտութիւն, Հայրենագիտութիւն, Աշխարհագրութիւն, Թուաբանութիւն, Գրութիւն, Երգեցողութիւն, Մարմնամարզութիւն, և Ձեռագործ օրիորդների մէջ:

Ուրմիի և Բարանդուզի ուսումնարանների ուսուցիչները պարբերաբար համախմբւելով կազմել են ուսուցչական ժողովներ և խորհրդակցել են մանկավարժութեան և դպրոցական կարգապահութեան վերաբերեալ զանազան խնդիրների մասին: Ունեցել են նա և փորձնական դասախօսութիւններ և աշակերտական զբօսանքներ:

Կրկին անգամ հարկ ենք համարում շեշտել այն հանգամանքի վրայ, որ եթէ ընկ-եան միջոցները չ՚ընդլայնւեն և բարեգործ ազգայինների կողմից օգնութիւն չը հասնի, ընկերութիւնս ոչ միայն չի կարող ընդարձակել կրթական գործը, այլ և ստիպւած կը լինի դուս իւր ծախքով պահւող ուսումնարաններից մի քանիսը գոցել: Մինչդեռ կարիքը և հանգամանքները պահանջում են, որ եղածների



ծաւալը ընդարձակել դեռ շատ ու շատ անուսումնարան մնացած գիւղերում նոր ուսումնարաններ հիմնելով:

## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՒՐԻԶԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մանկական պարտէզներ.— Ընկերութիւնս այս տարի Թաւրիզում պահում էր երկու մանկապարտէզներ, Ղալայում (նախկին Բար. ընկ-եանը) և Լիլաւայում (նախկին Թաւ. ընկ-եանը) երեք ուսուցչուհիներով, որոնցից երկուսը հրաւիրւած էին Կովկասից: Նիւթերի գործերի և խաղալիքների վրայ առանձին ուշադրութիւն էր դարձւած: Լիլաւայի մանկապարտէզում սովորում էին 37 երեխաներ երկու սեռից, որոնցից 12-ը թոշակաւոր էին, 25-ը ձրիավարժ: Ղալայի մանկապարտէզում սովորում էին 34 երեխաներ, երկու սեռից, որոնցից 28-ը թոշակաւոր էին 6-ը ձրիավարժ: Լիլաւայի մանկապարտէզի վարժուհին էր օր. Մարիամ Թումանեան, Ղալայինը Տիկին Շուշանիկ Խանազատեան մի օգնականով՝ օրիորդ Սոֆիա Մուրհաճեան:

Կարուձևի Արհեստանոցներ.— Ընկերութիւնս այս տարի ունէր երկու արհեստանոց. Ղալայում և Լիլաւայում, մի ուսուցչուհիով և մի օգնականով: Պարապմունքները տեղի էին ունենում շաբաթական 3 օրը մէկում և 3 օրը միւսում: Ղալայի Արհեստանոցում սովորում էին 15 օրիորդներ, 5-ը ձրիավարժ, 2-ը կիսաթոշակ 8-ը թոշակաւոր. Լիլաւայի Արհեստանոցում սովորում էին 13 օրիորդներ, 3-ը ձրիավարժ, 2-ը կիսաթոշակ, 8-ը թոշակաւոր: Այս տարի Ղալայի արհեստանոցի շրջանն աւարտեց՝ օր. Վարդանոյշ Բժշկեան: Ուսուցչուհին օր. Օլգա Սօնեան, օգնականը՝ օր. Վարդուհի Յակոբեան.

Գրադարան Ընթերցարան.— Ընկերութիւնս զանազան ժամանակներում տարբեր տեղերից և անձերից իբրեւ նուէր ստացել է բաւականաչափ ընթերցանութեան գրքեր, որոնցից մի մասը շարունակ նուիրել է թէ տեղոյս և թէ գաւառների ազգային կրթական հաստատութիւններին իսկ մի մասը պահել է Թաւրիզում յատկապէս կանանց և օրիորդների համար ձրի գրադարան-ընթերցարան հիմնելու նպատա-

կով: Ներկայ վարչութիւնս, նկատի ունենալով այն հանգամանքը, որ տեղական ինչ ինչ սովորութիւնների եւ հասկացողութիւնների պատճառով տիկիններն ու օրիորդները չեն կարողանում օգտուել քաղաքում գտնուած միւս գրադարաններից, յարգեց նախորդ վարչութիւնների որոշումը եւ այդ գրադարանի համար արդէն պատրաստի գրքեր բաւականաչափ համարելով՝ մի յայտարարութիւնով գրադարանը բացուած հրատարակեց: Այս տարի գրադարանն ունի 500-ի չափ գրքեր եւ ստանում է օրաթերթեր եւ ամսագրեր:

Այս գրադարանի համար որեւէ նուէր—գիրք թէ լրագիր վարչութեանս կողմից կ'ընդունուի խորին շնորհակալութեամբ:

---

Վարչութեան Անդամուհիները.

Նախագահ՝ Սրբուհի Ամատունի
Գանձապահ՝ Զաբել Եղիազարեան
Խորհրդականներ
( Հեղինէ Ժորժ
( Մարան Նազարբէգեան
( Արծուիկ Նազարբէգեան
( Փեփրոնէ Մելիք-Սարգսեան
( Իսկուհի Մելիք-Խաչատրեան

Ընկերութեան հասցէն՝ Société unie de bienfaisance des dames Arméniennes de Tauris.
Tauris (Perse)

1902. Յուլիս 15. Թաւրիզ:

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

## ՄՈՒՏՔ Հաշւեցոյց 1901 թիւ Հուլ. 1-ից

| | ղրան | կոպ. | ղրան | կոպ. |
|---|---|---|---|---|
| Դրամագլուխ առ 1-ն Հուլ. 1901. | | | 72,307 | 10 |
| Ստացած տոկոսներ | 7,293 | 20 | | |
| » Նուէրներ | 10,153 | 40 | | |
| » անդամավճարներ | 1,337 | 35 | | |
| Տօնածառից արդիւնք | 665 | 10 | | |
| Երկու արհեստանոցներից արդիւնք | 3,916 | 85 | | |
| Երկու մանկապարտէզներից արդիւնք | 1,929 | 80 | | |
| Աղաղանի ուսումնարանից թոշակ | 130 | | 25,425 | 70 |
| | | | 97,732 | 70 |



## մինչեւ 1902 թիւ Յունիս 30-ը. ԵԼՔ

| | ղրան | կոպ. | ղրան | կոպ. |
|---|---|---|---|---|
| Տրւած նպաստներ | 1,554 | 60 | | |
| Ջանազան ծախսեր. (ծառայ. աղախին. քարտուղար, նամակ, տպագրութեան,) | 2,264 | 85 | | |
| Երկու արհեստանոցներին ծախք | 5,762 | 30 | | |
| Երկու մանկապարտէզների ծախք | 10,537 | 55 | | |
| Ուրմի քաղաքի ուսումնարանի ծախք (*) | 1,084 | 10 | | |
| Ռաշվայի » » (*) | 2,076 | 50 | | |
| Բարառուի » » (*) | 2,087 | 48 | | |
| Դիլիջ-թեքէի » » (*) | 2,071 | 32 | | |
| Թումաթարի » » | 613 | 65 | | |
| Գերգարաղի » » | 1,184 | 02 | | |
| Իքի-Աղաջի » » | 664 | 55 | | |
| Դերէլէքի » » | 1,018 | 70 | | |
| Աղաղանի » » | 731 | 25 | 31,650 | 87 |
| Դրամագլուխ առ 1-ն Յուլիս 1902. | | | 66,081 | 93 |
| | | | 97,732 | 80 |

(*) Ծանօթ.
Նախ քան „Միացեալ" ընկ-եան Հաշիւների միացումը տրւած էր հետևեալ կանխավճարները.—Ուրմիի ուսուցչին 200 ղրան, Ռաշվայի վարժուհուն 102, Բարառուի ուսուցչին 305 ղ. և Դիլիջ-թէքէի ուսուցչին 305 ղ: Այսպիսով այդ ուսումնարանների ընդհանուր ծախքը լինում է՝ Ուրմիինը 1,284 ղ. 10 կ. Ռաշվայինը 2,178 ղ. 50 կ. Բարառուինը 2,392 ղ. 48 կ. և Դիլիջ-Թէքէինը 2,376 ղ. 32 կ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0219943

42.761